

գամ «արբեալ եւս դիպեցաւ» (266-7). այնքան զօրաւոր էր եւ անբաժան իւրմէ գինւոյն բռնակալութիւնը:

Այդ հին զեղխութիւնք դեռ այնչափ ընդարձակ են միջին դարերուն, մինչեւ անձկութեամբ ըսել տալ ականատեսի մը՝ թէ «զոր աչօք տեսանեմ եւ ականջօք լսեմ, եւ երկիւղիւ պաշարեալ՝ լռել ոչ կարեմ, թէպէտեւ կամիմ» (Սրգ. 79): Շնորհալին ի կարս շրջաբերականին մէջ կը հարկադրէր պատուիրել անոնց՝ «ի բաց լինել յանառակ արբեցութենէ... եւ սիրել զչափաւորութիւն ի զինի եւ յամենայն կերակրոց վայելս» (Ընդհ. 136): Մեր գինեմուրք քաջութեան ու մրցանաց նիւթ ըրած էին ըմպելին. եւ գինարբութենէ դառնալէն վերջ կը պարծէին եւս այլոց առջեւ: «Պատմեն, կ'ըսէ անծանօթ մեկնիչ մը, թէ զայս անուն յաղթեցի յըմպելն» (Լծ. Պհ. Գ):

Վենետիոյ Իրի ճառընտրին մէջ (Ժե դարու՝) կը գտնենք Մանդակունւոյն ժջ ճառն ընդարձակուած աւելի հին զրչէ մը, որ արբեցողին տգեղ պատկերին գեղեցիկ գոյներ տուած է, եւ որ հետաքրքրական է՝ մեր միջնադարեան բարուց լաւագոյն ծանօթութեան համար: «Հանապազ, կ'ըսէ, զգեղխին խնդրէ, եւ անառակ որկորըս-